

տօնուած է այս տարեգարձը: Փարիզ, 1946,
Ֆրանսուար 19-ին Societ  de G ographie-ի
սրահին մէջ հոծ բազմութեան մը առջեւ, որուն
նախագահած է Պր. Ա. Զօպանեան, և խօսք
առած են ՊՊ. Հրաչ Զարգարեան, Զարոյեան,
Ս. Քարեան. գեղարուեստական բաժնին մաս-
նակցած են Տիկ. Ա. Սարգիսեան, Օր. Ի.
Պիւլպիւլեան, Հ. Տարօնեան՝ Մուրատեան վար-
ժարանի մեր նախկին սան:

Տօնուած է նմանապէս Փրանսայի ուրիշ
Հայաշատ կեդրոններու ինչպէս նաեւ Ամերի-
կայի զանազան քաղաքներու մէջ, ուր ազգային
կազմակերպութիւնները տաք են, իտալիոյ մէջ
Միլան՝ վերակազմուած Հայ Երիտասարդաց
և Մշակութային Միութեան նախաձեռնու-
թեամբ, և այլուր:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Խ. Հայաստանի մէջ մեծ դարկ կը տրուի գեղարուեստական Թատրոնի զարգացման: Կառավարութիւնը քաջալերելու համար այս շարժումը՝ Հանրապետութեան 25-ամեայ տարեգարձին առթիւ մրցում մը բացած է: Քննիչ Յանձնախումբը աչքէ անցուցած է երեսուց եւհինգ Թատերական գործեր: Առաջին մրցանակ շահող եղած չէ: Բ.ին արժանացած են Նայիրի Զարեան իր «Արա Գեղեցիկ»ի և Վաղարշակ Վաղարշեան իր «Վանքաձոր»ին համար: Գ. մրցանակը շահած է Վահան Շուրերեան իր «Զավահիր»ի և Լեւոն Սաղաթէլեան իր «Կարմիր մանեակ»ը կոորդինեթուն համար: Մրցումին մասնակցող ուրիշ գրագէտներու գործերն ալ յանձնարարուած են բեմադրուելու:

Թատրոնի, Թատրերգութեան (օրերա, օրե-
լէթ) և շարժանկարի (տեղական բարձրագույն կիևո)
մէջ երեւցած են նոր զէմքեր: Սովետական
Պետական Թատրոնի մէջ ներկայացումներու նոր
Թատրաշրջանը 1945-1946 տարւոյն՝ բացուած
է Սեպտ. 15-ին Գ. Սունգուկեանի Խաչատու-
րայի բեմադրութեամբ: Սպենդիարեան Օբե-
րայի և Պալէթի (սլարախաղ) Պետական Թատրոնը
նոր եղանակի բացումը կտարած է Սյուսան
Ժողովրդական օբերայով, որուն երաժշտու-
թիւնը գործ է անուանի Ա. Սպենդիարեանի,
իսկ բառերը անուած են Յ. Թումանեան
նի մէկ քերթուածէն: Յայտագրին մէջ կան

Վերախին «Այտա»ն, «Ուիլյուլթլթլ», Կոնյոյի «Ֆաուսթը», Ռոսսինիի «Պարպիէրէ աի Սի- ղիլիա» և դեռ ուրիշ եւրոպական հիշնակ- ներէր ընտրուած գործեր:

Հայաստանի մէջ նոր երաժշտագէտ և երգա-
հան գէմբեր են Յարո Ստեփանեան, Արար
Խաչատուրեան և այլն, հրահանգուած եւրո-
պական ու ռուսական մեծ վարպետներու ա-
րուեստով: Վերջինս յօրինած է Սովիեթ.
Հայաստանի Պետական Ազգային Քայլերգը,
որուն ճառերը գրած է բանաստեղծ Սարմէն:

Մէծ զարկ կը արուի նաեւ շարժանկարի,
կը խօսուի յաճախ նշանաւոր բեմագրիչ Համօ
Բեկնազարովի մասին, որ արդէն նախապէս
պատրաստած Նաւոն, Պէպօ, Շօր Շօր, Զամ
գեղոյն ժապաւէններուն վրայ՝ ըրած է նաեւ
Դաշիք Բեկը, և ներկայիս կ'աշխատի Զօրավար
Քաճի վառարկի ժապաւէնը պատրաստելու:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՍԱՅԵԱԹ-ՆՈՎԱ-
ՅԻ ԵՐԳԵՐՈՒՆ

Սայեաթ-Կովայի մահուան 150-ամեակի առ-
թիւ, որ աօնուած է շքեղօրէն Հայաստան
վրաստան, և Ատրպէճան, հրատարակուած են
մեծ աշուղին հայերէն բանաստեղծութիւններէն
զատ նաեւ վրացերէն և ատրպէճաներէն լե-
զուով գրածները: Հրատարակուած է եւս ռուս
գրագէտներու կողմէն ռուսերէնի վերածուած
Սայեաթ-Կովայի երգերը:

Սայեաթ-Նովայի մահուան 150-ամեակը տօնուած է նաեւ Հայկական դաղըմընեբրուն մէջ:

ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ Խ. Հայաստանի
քնարերգական բանաստեղծներուն երիցագոյն վար-
պետը, անդամ Սովիեթ. Հայաստանի Գիտու-
թեանց Կաճառին, 1945 Յուլիս ամսոյն տնած
է իր 70-ամեակը: Այս առթիւ ստացած է «Լե-
նինեան» շքանշանը: Մեծ բանաստեղծին
կեանքը սկսած էն շարժանկարի առնել: Իր
բանաստեղծու-թիւններուն ռուսերէն թարգմա-
նութիւնն ալ կատարուած է և հրատարակուած
Գեղարուեստական Գրականութեան Հրատա-
րակչականի կողմէն: Իսկ հայրենական պատե-
րազմի շրջանին իր արտագրած հայրենասիրա-
կան հրապարակագրութեանց և քերթութեան-
ներուն համար ստացած է գրական առաջին
«Սթալինեան» դափնեպսակ մրցանակը, և 100
հազար ռուպլի:

Իր մասին առանձին յօդուածով մը պիտի
խօսանք թերթիս յաջորդ թիւին մէջ:

Դ. ԴԵՄԻՐՃԵԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒ-
ԹԵԱՆ 50-ամեայ ՅՈՒՆԵՍԿՈՒՄԸ

Մեծ շքեղութեամբ տօնուած է 50-ամեայ յօբեւեանը Դ. Դէմիրճեանի, մին իս. Հայաստանի մեծագոյն դեմքերէն, սիրուած գրագէտը Նորաշաւ երիտասարդութեան, մտերիմ բարեկամը Աւետիք Իսախանեանի: Դ. Դէմիրճեան կը պատկանէր հին սերունդին. գրականութեան ասպարէզը իջած է Նախայեղափոխական շրջանին, սկսած է ինքն ալ բանաստեղծութեամբ, բայց յետոյ մշակած առեւի արձակը, որուն վարպետներէն դարձաւ. մշակած է նաեւ թատրոնը: Ծնած է 1877-ին Ալուաբաղք, ընթացաւարտ ելած է Թիֆլիսի Ներսէսեան վարժարանէն, անցած է Ժընեւ բնագիտութիւն ու մանկավարժութիւն սորվելու: Տասնվեց տարեկանին սկսած է գրել. 1893-ին Տարազ-ի մէջ կը հրատարակէ իր առաջին ոտանաւորը, անկէ վեց տարի վերջ կը հրատարակուի իր երգերուն առաջին հաւաքածօն, իսկ երկրորդ մը 1913-ին: Նոյն տարին սկսած էր գրել նաեւ թատերական կտորներ, որոնց առաջինը կ'ըլլայ Վասակ ողբերգութիւնը, որուն կը յաջորդէ Դատաստում, Յովնան մեծատուն, Գալ Նազար, ինչպէս նաեւ պատմութեան Սարգստ, Ռաշիտ, Նիքեար: Լուսժողովոմտը 1931-ին կը տօնէ անոր 35-ամեայ յօբեւեանը, ու այդ առթիւ իր գործերէն մեծ մաս մը կը թարգմանուի ռուսերէնի, վրացերէնի, և թուրքերէնի: Վերջերս գրած է Վարդանանք պատմական վէպը, մշակելով այսպէս հայրենասիրական ու հայրենասէր ունեցող նիւթ մը:

Իր յիսու՛ն տարու՛ան գրա՛կան գործո՛ւնե՛ու-
թեան իբր արժա՛նի վարձա՛տրու[թ]ւն տրուած
է « 1 էնինեան » շքանշանը :

ԳԵՂԱՄ ՍԱՐԵԱՆ-ին եւս տօնուած է գրական գործունէութեան 25-ամեակը՝ 10. Հայաստանի մէջ: Երիտասարդ գրողներու շարքէն, յետ Ե. Զարեհի՛ անուանի քնարերգակ բանաստեղծ, ծնած 1900-ին: Առաջին անգամ 1920-ի է որ հրատարակած է իր քերթողական նախափորձերը: 1922-ին անցած Հայաստան եւ այնուհետեւ Հայրենիքի վերածնունդի տաք

կեսները եղած է իր ներշնչումի գլխաւոր աղբիւրը: 1930-ին սկսուած են հրատարակուել գործերը. Լյս տեսած են Երկարի ոտնաձայներ, Միջօրե, Երեք երգ Թատերական պոէմը, Հայրենիքի համար, Բաղրադներ, Փառքի Տաձար պոէմը:

ՆԵՐԳԱՂԹԸ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ. - ՏԵՆ
գազին կ'աշխատուի թէ՛ Հայաստանի մէջ՝ պա-
տրաստելու համար աեղ ու բնակարան, և թէ՛
արտասահմանի մէջ՝ կազմակերպելու համար
ներգաղթը գէպի հայրենի հողը՝ օտար ափերու
վրայ ցրուած հայ ընտանիքներու: Եգիպտոսէն,
Միւրիայէն, Յունաստանէն, Պուլկարիայէն և
Ռումանիայէն եկած են բազմաթիւ արձանա-
գրութիւններ: Հայաստանի մէջ 40 միլիոն
լուպլի հաւաքուած է այս նպատակին գործա-
ծելու համար: Միայն Լեհինականի մէջ կը
կառուցուին 10,000 հէկտար տարածութեամբ
հողամասի վրայ նոր բնակարաններ. նման շինու-
թիւններ կը կառարուին Երեւանի շրջակայքը
և օտարներու մէջ:

Արտասահմանի զանազան կեդրոններուն մէջ
կազմուած են Յանձնախումբեր կազմակերպելու
համար ներգաղթը:

ՇՆՈՐՀԱԼԻԻ 150 ՆՈՐ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԸ

Ա. Մնացականեան, Երեւանի Պետ. Զեռա-
գրատան գրացուցակը կազմած ատեն, գտած է
Շնորհալիի նոր 150 չանկուկներ, իրենց բո-
վանդակութեամբ աշխարհիկ, ներշնչուած ա-
ւելի բնութենէն, թուփոններէն, ծաղիկներէն,
բոյսերէն և այլն, մինչդեռ հրատարակուածները
« Բանբ. չափաւ » տաղարանին մէջ, աւելի կրօ-
նական նկարագիր ունէին:

ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՀԱՅԵՐԸ

10. Արարկէյճանի հայերը կարեւոր դիրք ունին, և կը կազմեն աեղւոյն բնակչութեան մէկ տասներորդը. ունին գալորոցներ, թատրոն, և մշակութային ուրոյն կեանք: Հոն կ'ապրին նշանաւոր բանաստեղծ Աշոտ Հրաչ, և անուանի բանաստեղծուհի Վարսենիկ Աղասեան: Ասոնց և ուրիշներուն գործերը, ինչպէս նաեւ Սամուէլ Գրիգորեանի, Գարեգին Սեւոնցի, հրատարակուած են Արար. Պետհրատէն:

բազմապետ Հ. Մեսրոպ Ճանաչեան՝ Ս. Կա-
րողոս Թեմական վարժարանի նոյն գեղեցիկ
Սրահին մէջ՝ խօսեցաւ յաջորդ օրը Յունիս
15-ին Հայերէն լեզուով Բազմավեպի հարիւ-
րամեակի մասին Հայ Գաղութին առջեւ՝ ցոյց
տալու համար Հայ Թերթերու երեցագոյնին
կատարած մեծ դերը Հայ մշակոյթի կեանքին
պատմութեան մէջ, բոլոր այն նուաճումները
գրական, մատենագրական, պատմական, հնա-
խօսական, բարոյական մարդերու մէջ, զոր
գար մը ամբողջ առանց դադարի ըրած է յօ-
գուտ Հայ մտաւորականութեան և գիտութեան։
Շեշտեց գլխաւորապէս այն բացառիկ պարա-
զան՝ որ Բազմավեպին է, դար մը շարունակ
գիմագրած ըլլալու դժուարութիւններու և
ժամանակի, համեմատութիւններ ընելով ազ-
գային և օտար ուրիշ Թերթերու հետ։ Յօդե-


լինական տօնախմբութիւն չէր, այլ հեռաւոր
պատրաստութիւն այն հանգիստներուն՝ որոնց
ազգը պիտի տրուի իր յարմար ժամանակին։

ԵՄՄԱՆՈՒԷԼ ՓԱՓԱՋԵԱՆԻ ՅԱԶՈՂՈՒ- ԹԻՐՆՆԵՐԸ

Երգեչ Է. Փափաջեան, Միլանոյի «Աբա-
լայ»-ի մէջ երգելէ վերջ օգերայի կտորներ,
անցաւ վերջերս Փարիզ և հոն ալ մեծապէս
գնահատուեցաւ իր գեղեցիկ ձայնին և իր մշա-
կուած լարուեստին համար։ Հոն երգած է «Կեթէ
Լիրիք»-ի և «Օտէնի» մէջ դասական օբե-
րաներ (Մասընէ - Մոցարթ - Ռօսսինի)։ Է.
Փափաջեան Հայ անոնին պարծանք մըն է այսօր
Եւրոպական բեմերուն վրայ։

ԳԻՏԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ Ի Ս. ՂԱԶԱՐ

Սիրով և հաճութեամբ ողջունեցինք այս տարուան Ապրիլ 27-ին՝
Հայաստանէն ժամանող երկու պատուիրակներ՝ Փրոֆ. Գէորգ Աբով
և իր անձնական քարտուղարը՝ Պրն. Անուշաւան Տէր-Գրիգորեան։
Հայրենիքէն կու գային՝ բերելով հետեւեւին հայրենի յիշատակներ,
օգտաշահ գրքեր, և մանաւանդ Հայաստանի Պետական Ակադեմիային
պաշտօնական Նամակը՝ հրաւերով կապ հաստատելու Հայաստանի և
Ս. Ղազարու երկու Հայկական Ճեմարաններուն միջեւ։ Յանկալի
հիւրեր անոնք՝ որ բերին մեզի շունչն ու ոգին Նոր Հայաստանի՝
վերածնած գրական, գիտական, ճարտարարուեստական եռուն կեան-
քով։ Մնացին մեր մօտ շուրջ երեք ամիս՝ նուիրուած ուսումնասի-
րելու մեր Մատենադարանին ձեռագիրները, ծանօթանալու 1936-էն
ստեղծ Միսիթարեան գրական արտադրութիւններուն, գնահատելով
գիտակցօրէն մեր կատարած նուաճումները՝ տպագրուած և կամ ձե-
ռագիր, ի զարգացումն հայ մշակոյթին։
ԲԱԶՄԱՎԵՊ-ի յաջորդ թիւով պիտի հրատարակենք Հայաստանի
Պետական Ակադեմիային այդ Նամակը և պիտի տանք նաեւ յա-
րակից ուրիշ կարեւոր տեղեկութիւններ։



ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ԽՄԲ. — ԽՈՐՀՐԴ. ՀԱՅԱՍՏԱՆԷՆ

Խ. Հայաստանի 25-ամեակը - Թատերական
շարժում Հայաստանի մէջ - Նոր հրատարա-
կութիւն Սայեաթ-Նովայի երգերուն - Աւե-
տիք Խաչակեանի ծննդեան 70-ամեակը -
Դ. Գեմրճեանի զրական 50-ամեայ յորե-
ւեանը - Գեղամ Սարեանի 25-ամեայ զրական
յորեւեանը - Ներդաշխի զգալի Հայաստան -
Շնորհալիի 150 Նոր Հանելուկները - Աւեր-
պէյճանի Հայերը - Վահրամ Փափաջեանի
ընդունելութիւնը Մոսկուայի մէջ - Երաժշտա-
կան մրցանակներ Խ. Հայաստանի մէջ - Հայ
նկարիչներու ցուցահանդէսը . . . 189 - 192

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԷՆ

Հիւլէական սուրբի զիւարն մասնակցող Հայ
զինականի մը մահը - Ա. Ահարոնեանի
80-ամեակը - Զ. Մութաֆեանի ցուցահանդէսը
Մարսիլիոյ մէջ - Հայկական Պատարագ
Նոթը-Տամի մէջ - Հ. Յ. Գաշնակցութեան
յուշագիրը Մ. Ազգաց ընդհ. ժողովին - Օշա-
կանի յորեւեանը - Երնշ. Միսիթար Արքաշօր
տարեկան յիշատակը - Ազրիլեան Նաշա-
տակներու Սրահանդէս Միլանու մէջ - Ռ.
Մարի Պատարեանի վերջին նուագահանդէս-
ները - Հ. Բ. Ընդհ. Միութեան 40-ամեակը -
Հայ արձանագործուհի մը յաջողութիւնը -
Վ. Ե. Ազաճանեան կարգիւնալին յիշատակը
Միլանու մէջ - Բազմավեպի հարիւրամեակի
մասին բանախօսութիւն Միլանու մէջ - Է.
Փափաջեանի յաջողութիւնները - Գիտական
այցելութիւն մը ի Ս. Ղազար . . . 192 - 196

ECHOS ARMÉNIENS

Réd. — DE L'ARMÉNIE SOVIÉTIQUE

Le 25^{me} anniversaire de l'Arménie So-
viétique - Le mouvement dramatique
en Arménie - Nouvelle publication des
poésies de Sayath Nova - Avédik Issa-
haghian à l'occasion de 70^{me} anniver-
saire de sa naissance - T. Temirdjian
- Kegham Sarian - Les nouvelles 150
enigmes de Nersès le Gracieux - Les
arméniens d'Aderbédjan - Réception
donnée à Vahram Papazian à Moscou -
Prix pour les pièces musicales en Ar-
ménie . . . 189 - 192

DES COLONIES

La mort de Haroutioun Daghljan, qu'a
participé à l'invention de la bombe a-
tomique - Le 80^{me} anniversaire de Avé-
dik Aharonian - L'exposition des Ta-
bleaux de Z. Moutafian à Marseille -
La grand' Messe arménienne à Notre-
Dame de Paris - Le memorandum sur
la question arménienne, présenté à la
Conférence des Nations Unies - Le ju-
bilee d'Ochagan - La fête annuelle de
l'abbé Mékhitar - Célébration de la
fête des martyrs arméniens à Milan -
Les Concerts donnés par Mlle Marie
Bodurian - Le 40^{me} anniversaire de la
Société générale de Bienfaisance - Suc-
cès d'une sculptrice arménienne à An-
kara - Une conférence sur le Card.
Agadjanian à Milan - Conférence sur
le rôle de Pasmaveb, à l'occasion de
son centenaire - Une visite scientifi-
que à St. Lazare . . . 192 - 196